Սեմինար Խմբային հայցի ինստիտուտը քաղաքացիական դատավարությունում թեմայով

22.04.2011 11:34

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատը հրավիրում է մասնակցելու «Խմբային հայցի ինստիտուտը քաղաքացիական դատավարությունում» սեմինարին: ՀՀ-ում անցկացվող դատաիրավական բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է լրացումներ կատարել քաղաքացիական դատավարության օրենսգրքում՝ խմբային հայցի ինստիտուտ նախատեսելու համար: Սեմինարի ընթացքում մասնավորապես անդրադարձ կկատարվի խմբային հայցի էությանը, այդ ինստիտուտի զարգացմանը, դրա՝ այսօր գոյություն ունեցող տարատեսակներին: Այնուհետև անդրադարձ կկատարվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու նախագծին և կքննարկվի դրանում տեղ գտած դրույթների նպատակը, ֆունկցիան և առկա թերությունները:

Սեմինարը կվարի «Լեգելատա» իրավաբանական ընկերության տնօրեն, փաստաբան Գոռ Մարգարյանը:

Սեմինարը տեղի կունենա 2011թ. ապրիլի 29-րդ ժամը 18.00-ից մինչև 20.00-ը՝ ՀՀ փաստաբանների պալատի նիստերի դահլիճում:

Լրացուցիչ տեղեկությունների և դասընթացին գրանցվելու համար խնդրում ենք զանգահարել ՀՀ փաստաբանների պալատ հետևյալ հեռախոսահամարներով՝56-07-76 և կամ պատասխան նամակ ուղարկել info@advocates.am էԱյս էլ.փոստի հասցեն պահպանված է spam bots-երից, պետք է Javascript-ին հնարավորություն տալ դիտելու համար լ. հասցեին:

Հանդիպման համար կարող եք գրանցվել մինչև 2011թ. ապրիլի 29-ը ներառյալ: Տեղերը սահմանափակ են (25 փաստաբան). դասընթացներին կհրավիրվեն ըստ գրանցման առաջնահերթության:

Խնդրում ենք գրանցվել միայն այն դեպքում, եթե վստահ եք, որ անպայման կմասնակցեք:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })